բոլոր առաջարկութիւնները, որոնց բանուորները կը ներկայացնեն իրան։ Ա,դ յօդուածից երևում է, որ կառավարութիւնը անուղղակի խոստում է տալիս օգտիալիստներին օշնչացնել նրանց դէմ ուղղած օրէնքը, եթէ նրանք կօգնեն իշխան Բիսմարկի նպատակների իրագործմանը։

ՖՐԱՆՍԻԱ

Բելվիլի մէջ եղած ընտրողական ագիտացից ժողովի ժամանակ, երբ ժողովին մասնակցողներից մի քանիսը չէին կամենում թոյլ տալ դամբետտային խօսել, պնուսամենայնիւ նա մի քանի խօսք ասաց։ Նրա խօսքերը անդադար ընդհատում էին մի կողմից նրա հակառակորդները և միւս կողմից նրա կողմնակիցները։ Առաջինների ընդհատումները ծիծաղական էին, երկրորդներըը ծափահարում էին և պահանջում էին, որ դամբետտա խօսէ։ „Ցաղաքացիք, միթէ կարելի է, միթէ դուք Փարիզի ժողովրդի էք, ասաց նա։ Բելվիլի մէջ, Փարիզի մէջ հաւաքվել է հանրապետական դէմոկրատիան և ահա նա ինչպիսի տեսարան է ներկայացնում։ Եւ դուք դեռ ևս ձեզ ազատութեան արժանի էք համարում։ Միթէ դուք կարծում էք, որ ազատ ժողովրդի բարք ու վարքը այդ ձևով է ստեղծվում։ Ցաղաքացիք, նա, որ սուրց, անամօթ է։ Ես կամենում եմ խօսել և ձեզ ասել ճշմարտութիւնը։ Լռեցէք, պղաղակողներ, դուք ոչ ամօթ ունէք և ոչ խղճմտանք։ Ինչ, ես գալիս եմ ձեզ մօտ և դուք այնքան չոմ չունէք որ կարգ պահպանէք և խօսքի ազատութիւնը պաշտպանէք։ Դուք կամենում էք ուրեմն, որ եգուց, երբ ձեզ կը գասի ամբողջ Ֆրանսիան, նա եզրակացնէ, որ դուք ոչ թէ ազատ մարդկերանց բարք ու վարք ունէք, այլ բանուորների ընտելացած սարուկներ։ Դուք շատ լաւ գիտէք, որ վիճաբանութեան ժամանակ ես կարող եմ ձեզ պատասխանել։ Ցեղ համար ասելի հեշտ է բացականչել „ոչ“ առանց իմանալու, թէ ինչ են ասում գուցէ ձեզ վճարել են, որ դուք անդադար կանչէք „ոչ“։ Բայց լսեցէք. ազաղակողները փոքրամասին են, նրանք չեն կարող ճշմարտութիւնը ոտնակոխ անել։ Նրանց այստեղ ուղարկող խելագար ֆանատիկոսները չեն կարող արգարութեան և իրաւունքի աղաղակը պնել, մանաւանդ այստեղ Բելվիլի շրջանի մէջ։ Դուք կարող էք այս շրջանի մէջ միայն ամրակ գցել, բայց անկարող էք նրանց անպատուել։ Ես ձեզ վստուց ճանաչում եմ և վստուց սոսկալ եմ հանել ձեր դիմակը և ձեզ երբէք չի աջողվի ձեր ոտղծութիւն և անամօթ ազաղակներով ճնշել իմ խօսքի ազատութիւնը և մոքերի արտայայտութիւնը։ ուրեմն դուք չէք կամենում լսել ինձ։ Շատ լաւ, ես իմ կեանքի մէջ բաւական շատ եմ խօսել։ Իմ զգացմունքները և իմ քաղաքականութիւնը բաւական յայտնի են, այնպես որ ես պէտք չունեմ նրանց նորից մեկնելու։ Բայց լսեցէք, ես ձեզ երբէք չեմ խաղի իսկական ժողովրդի հետ։ Ա,ինչ մարդուն, որ ձեզ հետ խօսում է, դուք դիմաստոր էք անուանում։ Բայց գիտէք, թէ դուք ոմի էք։ Ցը գիտէք։ ուրեմն ես ձեզ կասեմ։ Դուք հարբած և անխօս սարուկներ էք։ Եղի մէկ խօսք. օգոստոսի 21-ի քուէարկութիւնը, իսկական և ազնիւ քաղաքացիների քուէարկութիւնը, վրէժխնդիր կը լինի ինձ համար։ Քուէարկութեան միւս օրը, դուք մի խումբ ազմուկ գցողներ կը վերագառնաք ձեր սովորութիւններին, բայց ես ձեզ կը գտնեմ ձեր գեռնափորների խորքումն։ Բաւական է։ ես չեմ զղջում, որ եկայ այս տեղ, որովհետև ես ծառայում եմ և ցանկանում եմ ծառայել Բելվիլի շրջանի հաւատարիմ և հանրապետական ներկայացուցիչներին։ Ինչ կը վերաբերի միւսներին, ես նրանց արհամարհում եմ և գտատապարտում եմ, ինչպէս որ ժողովրդի ձշմարիտ գատաւճիռն էլ նրանց կը գտատապարտի։“

ԱՆԳԼԻԱ

Օգոստոսի 16-ին լօրդերի ժողովի մէջ կալուածական օրինագծի քննութեան ժամանակ լօրդ Սալսբիւրի ասաց, որ նա բաւական է համոզված լօրդերի ժողովի ազած զիջումներից։ Նա յոյս ունի, թէպէտ հաւատացած չէ, որ օրինագիծը օգուտ կը տայ իրլանդացի վերաբերներին և վստահար չի լինի կալուածատէրերի շահերի համար։ Նրանից յետոյ խօսեցին ուրիշները և վերջը ի վերջոյ կալուածական օրէնքը ընդունվեցաւ լօրդերի ժողովից այն ձևով, ինչպես վերջին անդամ Տատատեց համայնքների ժողովը։ Բոլոր խօսողները շնորհակալ էին համայնքների ժողովից, որ նա պարլամենտական գժուարութիւնների առաջն առաւ։ Լօրդ Սալսբիւրի յայտնեց, որ կուսակցութիւնների մէջ սկզբնական համաձայնութիւն չէ եղել։

Համայնքների ժողովի մէջ օգոստոսի 18-ին քննվում էր Պարնելի առաջարկութիւնը իրլանդիայի մէջ արտաքոյ կարգի օրէնքների գործադրութիւնը գադարեցնելու մասին։ Ա,դ առաջարկութիւնը մերժվեցաւ 83 ձայների մեծամասնութեամբ 30-ի դէմ։ Գլադստոն մանակցեց վիճաբանութիւններին և ասաց, որ կառավարութիւնը իր սրբազան պարտականութիւն է համարում պաշտպանել օրէնքը և կարգապահութիւնը և ոչ մի պատնէշից չէ կարող ընդունել բանտարկվածների ազատութիւնը հէնց մի օրով չատպեցնելով։ Կառավարութիւնը չափազանց ցանկանում է սահմանափակել կամ բոլորովին գադարեցնել ստիպողական օրէնքների գործադրութիւնը, բայց նա օգուտ կը գտի իր իրաւունքներից այն անցգների առաջն առնելու համար, որոնք ամեն են բերում մի լուսաւորված ազգուս թեան։

Լօրդ Սալսբիւրի իշխան Բիսմարկի նըմանն անստորագիր նամակներ է ստանում, որոնցով սպառնում են սպանել նրան։ Նըրբերում Սալսբիւրի գնացել էր իր ամառանոցը, որտեղ պօլիցիական վարչութիւնը մի բաց նամակ ստացաւ, որի մէջ գրված էր թէ բերմինգհամի մէջ մի խումբ իրլանդացիք պատրաստվում են սպանել լօրդ Սալսբիւրին։ Ա,յս պատճառով լօրդի ամառանոցի և բնակարանի շուրջը պօլիցիական խիստ հսկողութիւն կայ։ Կարծում են, որ այդ նամակը հանաքի համար էր գրված։

ՆԱՒԱԿ ԹԻՒՐԻԱՑԻ

Կ. Պօլիս, 9 օգոստոսի 81

Հաւաստի հեռագիր մը հաղորդեց թէ Կ. Պօլսոյ իտալական դեսպան պ. Քօրթի իր կառավարութենէն հրահանգ ընդուներ է որ յաւ մը լօրդ Տըֆերինի աջակցի 61-րդ յօդուածի գործադրութեանը համար։ Այս լուրը շատ մեկնութիւններու տեղի տուաւ. քաղաքագիտական նոր ծրագիրներու նախաբանքը սեպուհացաւ, և մեր մէջն ալ կարևորութիւն տուաւ։ Գժբաղդաբար ազեկ աղբիւրէ տատգեցի որ այս լուրը անհիմն է։ Հայկական հարցը միշտ իր նախկին վիճակին մէջն է։ Գիւանագիտական միջոցներով Հայաստանը բարեկարգելու ամենէն աւելի յոյս ունեցողներն ակսած են կարծել թէ կը խաբուին։ Կարծելք թէ այս պարագային մէջ յուսահատութիւնը աչերտը է։ իրաւ է որ չատ դժուարութեանց պիտի հանդիպինք և հանգրուանէն առջի ձմեռն ալ պարապ պիտի անցնի, բայց վճռողական բան մը լսել կարելի չէ։ Ապահոլու ենք տեսնելու թէ բացակայ դեսպաններէն մէկուն ընթացքը ինչ պիտի ըլլայ վերադարձին վերջ։

Սակայն կառավարութիւնը այս պարագայ մէջ ոչ ոքէ չանգրանէ և կը ջանայ հնարկուռ այնպէս տարացնել հարցը որ եթէ օր մը նէրօպային յուսահատին, ինքն իրենին բան մը ընելու կարող չըլլան։ Եւ սարսափը կը տարածէ ի մեզ։ Ամենէն աւելի իր ուշադրութիւնը Հայաստանի առաջնորդներուն վրայ դարձուցեր է և առաջնորդաց դէմ հալածանքը կը չարունակէ։ (մեղ համար լաւ ըլլան թէ վատ նոքա)։—Գիտէք արդէն թէ չատ մը առաջնորդներ կ. Պօլիս կը թափառին կառավարութեան հրամանաւ, ասոնց մէջէն է Ապահունի Եղնիկ եպիսկոպոսը. նախկին ամէն երիսասարդը որ երկչ չատերուն առաջնութեան առարկան էր և այսօր հալածանաց մկրատնեմանը ժողովրդականութիւն կը վայելէ։ Տաճկի գատարանը գատապարտեց զնա մահնդնական բանի ալիսատութեանց, ամբաստանելով զնա որ Հայաստանի մէջ յեղափոխութիւն կը պատրաստէ Եղնիկ եպիսկոպոս, Ազգակիրի առաջնորդ, ընկերութիւն մը կազմած էր Ազգասէր անուամբ, գաւառին մէջ կրկնութիւն ստրածնելու համար։ Ընկերութեան նախագահը մի ռուսահայ էր։ ընկերութեան կնիքին վրայ փորուած էր մեր տիեսանոցը Նոյեան պատնէշին— Հինգ հազար տարիներու մէջ, անչուշտ առաջին անգամ ըլլալով, այդ պատկերն արձիս մը կը սեպուի. արձիս որ Նոյեսից դրօշակ կը նշանակէ։ Ուրեմն Եղնիկ ռուսական գործիք մ'է Հայաստանի մէջ յեղափոխութիւն պատրաստելու։ Զարմանալու չէ որ այս տեսակ եզրակացութիւն մը հանել կրցող տաճիկները գատապարտեն նա և եպիսկոպոսը։ Եղնիկ եպիսկոպոս Խնդիրը վճռաբկնչ տատանին տարաւ, և հաստատական է որ վերջնական տատանը անպատճառ յայտարարէ Եղնիկ եպիսկոպոսը։ Կառավարութիւնը կը կարծէ թէ առ այժմ այսքանը բաւական է հանգիստանալ համար հայ եկեղեցականաց որ վերջերը չը պատնաներ։ Աւելի առաջ անցնելն խոհեմութիւն չը սեպեր։ Մանաւանդ դեսպանք ալ բաւական տեղեկութիւններ տատացած ըլլալով այս գատատանին վրայ, գիտցած ըլլալու համար թէ ինչքան չէ կարող այդպիսի հրաման մը թրկել եւ վան, վան զի Խրիմեան սրբազանի դէմ այսպիսի միջոցներու դիմելն կը նշանակէ վատգերացնը յուզել և ասոր հետեւութիւնը ազկ չըլլար։ Պարտրաքի այս դիմագրութեան վրայ Բ. Դուռը իր խորհուրդներ ետ կենալու տատգեցաւ։

Սակայն Խրիմեան սրբազանի և Գարեգին վարդապետի յարաբերութեանց մասին հանգիստ չենք, թէ Տփխիս և թէ Կ. Պօլիս հրատարակութիւններ եղաւ թէ Գարեգին վարդապետ ազգին չհետուն համաձայն չը գործեր և Խրիմեան սրբազանի հակառակութիւն կընէ։ Մանաւանդ տեղեկութիւններ, վատահելի աղբիւրներէ ստացուած, կրսեն թէ այս հրատարակութիւնները ատոդ են, բայց այսուհանդերձ մենք չենք ուզեր հաւատալ, վատ զի Գարեգին վարդապետը ճանչցած ենք այն փիչ գանուտով կրօնաւորներէն մէկը որ թէ խելացի են և թէ ազգին կը ծառայեն, երբոր թէ Գարեգին վարդապետ Կ. Պօլիս գօրաւոր աջակցութիւն կը գտնէ, իր տրամադրականը Կ. Պօլիս խրկած բայց չէ ընդունուած (այս ատոդ է, միայն թէ ինչու տրամադրականը Խրիմեանի չը տար)։ թէ՛ Խրիմեան սրբազան խոհեմութիւն կը համարէ Գարեգին վարդապետի դէմ իր գծդեսութիւնը չը յայտնել որպէս զի վանք երկպառակութիւն չը ծագի։

Վան Հայաստանի մէկ փօքրիկ գիւղը չէ, ամենքն ալ գիտեն նաև թէ Խրիմեան սրբազան հայ ազգին վատահութիւնը կը վայելէ, ուրեմն պէտք է ապահով ըլլանք որ Խրիմեան սրբազան ազգին օգուտ բերելիք իր բարի խորհուրդներն գործադրելու առեն Գարեգին վարդապետի կողմանէ արգելքներու չը հանդիպիր։ Աչրդեօք կարելի չէ որ Խրիմեան սրբազան ուղղակի կամ անուղղակի կերպով յայտնէ ազգին որ իրեն և Գարեգին վարդապետի մէջ հակառակութիւն չը կայ, եթէ այսպիսի յայտարարութիւն մը չը տեսնենք այն ատեն պիտի համգրնենք թէ իրաւցնէ Գարեգին վարդապետ Խրիմեան սրբազանի դէմ կը չարժի. ալ ազգին գիտալու բան է թէ՛ Խրիմեան սրբազանէն և Գարեգին վարդապետէն ձրը պիտի ընտրէ։

Նոր մեծ հակառակութիւն մ'ալ պատրիարքարանի և Բ. Դրան մէջ։ Սուդ Միքրոփէ կամենգիկոսը յաջողեցաւ վերջապէս Բ. Դռնէն ուղղակի հրովարտակ ստանալ իր պաշտօնի տատատութեան համար։ կամենգիկոսը 8 տարի է որ այդ աթոռը բաղած է, սակայն գեռ իր հրովարտակը ձեռք չէր բերած, վասն զի պատրիարքարանի և իր մէջ խնդիրներ կային կարգադրելու։ Միքրոփէ կամենգիկոս գործին այսքան երկարաուն պատրուակ բռնելով տեսանուտ եղաւ խնդիրներն կ. Պօլսոյ պատրիարքական իշխանութիւնէն անկախ ընել։ Ագդ. վարչութիւնը 8 ամսէ ի վեր է անտարբեր կեցած էր, և զանազան կասկածներ կը յարուցուին վարչութեան դէմ, զոր ատելի գժուար ըլլալով չենք ուզեր հոս առաջ բերել։—Ցաճկի նախարարաց խորհուրդը կառավարութեան չհաց համաձայն գտաւ հայ կամենգիկոսին առաջարկը, հաստատութեան հրովարտակը ուղղակի տալ որոշեց, սակայն վաներացոյց։

Խրոդութիւնը ինքներն կը խօսի. կ. Պօլիս ատեն կարգի հայերն արտաքոյ կարգի զայրոյթ մը զգացած են։ Միքրոփէ կամենգիկոս ազգային կեդրոնական իշխանութեան միտքանը ամենէն մեծ հարուածը կուտայ. պատրիարքական իշխանութիւնը որ պէտք է զօրաւոր ըլլայ քաղաքական վիճակի մէջ կը սկսի մտնել, որպ հետեւութիւնը թափրքիոյ հայոց ազգան վատատար պիտի ըլլայ։ Ասիկայ լաւ հասկցած են Բ. Դուռը և Խրիմեանը, այնպէս որ վ.ագի զարմանք կը յայտնէ թէ ինչու հայոց պատրիարքը բաղաքեր է Բ. Դռնան այս ընթացքին գէմ։ Ասիկայ կամենգիկոսութեան և ազգութեան չահերը համաձայն են, ուրեմն հայ ազգին չահերն պատճառած են ռուսկհան ինչ որ թիւրք ազգութեան չահն է նոյնը հայ ազգին չահն է (?)։ Պատրիարք, վարչութիւն ամենքն ալ սկսած են իրար անցնելու պիտի յաջողին. տատրաստական։— Ա,հաւանաբար խնդիր մը որ գարձեալ զինք պիտի զբաղեցնէ։ Ա,յս մէկոյնիս որ ամեն կերպով ուշադրութեան Հայաստանի բարեկարգութեանց և զարգացման խնդրոյն պիտի տանք, հայ կամենգիկոս մը կը միանայ իսկսոց հետ և կը ջանայ ուշադրութեանս ուրիշ կողմ դրաւել։ Ո՞վ գիտէ օրքան առեներ պիտի հարկադրուինք այս տեսակ իրողութեան վրայ խօսելու։—Ուրշափ առեն ազգը տատ պիտի զբաղի։

Ա,յս ծանրակշիռ իրողութիւնները այնքան տխրութիւն կը պատճառեն, որ ա,լ ես համակ չարունակել անհնարին կըլլայ, գիտնալով որ ինչ Նեմեի վրայ ալ գրեմ խնամ երկրորդական պիտի երևայ։ Ոչ մէկուն մտքին առջևէն կրնայ հեռանալ սա բաղդատութիւնը մէկ կողմէ Նեսրես և Խրիմեան, միւս կողմէ կամենգիկոսներ։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի սրժէ 96 ր. 25 կ., երկրորդ 94 ր., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը սրժէ 229 ր. 50 կ., երկրորդ 226 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը սրժէ 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 12 կ., երրորդ 91 ր. 12 կ., սակի 7 ր. 68 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա սրժէ 25,81 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա սրժէ 220 մարկ 50 պֆ., Փարիզի վրա սրժէ 272 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի սրամադրութիւնը սմեր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՔՈՒՆԻ